«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 87/5

07-ը մարտի 2026 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը համաձայն հավելվածի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2026թ. մարտի 07-ի նիստի թիվ 87/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Մ. Մ. Օթարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն քաղաքականությունը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) շրջանավարտների իրազեկման, նրանց հետ համագործակցության և Մասնաճյուղի գործունեությանը ներգրավման ռազմավարական մոտեցումները, սկզբունքներն ու հիմնական ուղղությունները՝ ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:

2. Քաղաքականությունը առնչվում է Մասնաճյուղի բոլոր շրջանավարտներին՝ անկախ ուսուցման ձևից, կրթական ծրագրից կամ ավարտման տարեթվից և տարածվում Մասնաճյուղի այն ստորաբաժանումների վրա, որոնք իրենց գործառույթների շրջանակներում ներգրավված են շրջանավարտների հետ փոխգործակցության գործընթացներում:

3. Սույն քաղաքականությունը հիմք է հանդիսանում շրջանավարտների հետ աշխատանքի կազմակերպմանն ուղղված ներքին ընթացակարգերի, ծրագրերի և միջոցառումների մշակման համար:

2. Քաղաքականության նպատակը

4. Քաղաքականության հիմնական նպատակն է ձևավորել և զարգացնել Մասնաճյուղի և շրջանավարտների միջև շարունակական, համակարգված և փոխշահավետ համագործակցություն՝ նպաստելով.

- Մասնաճյուղի կրթական, գիտական և հասարակական գործունեության զարգացմանը,
- կրթական ծրագրերի որակի բարելավմանը,
- շրջանավարտների մասնագիտական առաջընթացին և կարիերայի զարգացմանը,
- ենթակառուցվածքների բարելավմանը, որակյալ կադրերի ներգրավմանը:

3. Քաղաքականության հիմնարար սկզբունքները

5. Քաղաքականության հիմնարար սկզբունքներն են.

1) Շարունակականությունը – Մասնաճյուղի և շրջանավարտների միջև կապը դիտարկվում է որպես երկարաժամկետ գործընկերություն:

2) Ներգրավվածությունը – խրախուսվում է շրջանավարտների ակտիվ մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման, կրթական և հասարակական գործընթացներին՝ որպես արտաքին շահակիցներ:

3) Թափանցիկությունը և բաց հաղորդակցությունը – ապահովվում է տեղեկատվության մատչելիությունն ու երկկողմանի հաղորդակցումը:

4) Փոխշահավետությունը – համագործակցությունը կառուցվում է Մասնաճյուղի և շրջանավարտների ներուժերի համադրման և ընդհանուր արժեքներ ստեղծելու հիման վրա:

5) Օրինականությունը և տվյալների պաշտպանությունը – շրջանավարտների անձնական տվյալների հավաքագրումն ու մշակումը իրականացվում է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

4. Քաղաքականության հիմնական ուղղությունները

6. Շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականության իրականացման հիմնական ուղղություններն են.

1) շրջանավարտների համակարգված իրազեկում Մասնաճյուղի գործունեության, կրթական ծրագրերի, նախաձեռնությունների և միջոցառումների վերաբերյալ,

2) շրջանավարտների ներգրավում կրթական ծրագրերի մշակման, բարելավման և մշտադիտարկման գործընթացներում,
3) շրջանավարտների մասնագիտական կարողությունների զարգացման և կարիերայի առաջխաղացման խթանում՝ վերապատրաստումների և ուղղորդումների միջոցով,
4) շրջանավարտների մասնակցության ապահովում Մասնաճյուղի կրթական, գիտական և հասարակական նախաձեռնություններին,
5) համագործակցության հարթակների զարգացում, շրջանավարտներին միավորող գործընթացների խրախուսում և շրջանավարտների կայուն համայնքի ձևավորում։

5. Քաղաքականության իրագործման ընդհանուր մոտեցումները

7. Մասնաճյուղը խթանում է շրջանավարտների մասնակցությամբ կրթական, գիտական և հասարակական միջոցառումների կազմակերպումը։

8.Աջակցվում են մենթորության, փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման նախաձեռնությունները։

9.Ապահովվում են հետադարձ կապի մեխանիզմներ՝ շրջանավարտների կարծիքների, առաջարկությունների և գնահատականների հավաքագրման նպատակով, այդ թվում՝ ամեն տարի «Շրջանավարտների օր» միջոցառման կազմակերպման միջոցով։

6. Տեղեկատվական և հաղորդակցման քաղաքականություն

10. Շրջանավարտների իրազեկումն իրականացվում է Մասնաճյուղի պաշտոնական հաղորդակցման միջոցների և սոցիալական հարթակների միջոցով՝ ապահովելով տեղեկատվության ամբողջականություն և հասանելիություն։

7. Կառավարում և պատասխանատվություն

11. Սույն քաղաքականության իրականացման ընդհանուր համակարգումն ապահովում են ֆակուլտետները՝ Մասնաճյուղի ստորաբաժանումների փոխհամագործակցված աշխատանքի միջոցով։

12. Քաղաքականության իրականացման շրջանակում ստորաբաժանումների գործառույթներն ու պարտականությունները սահմանվում են համապատասխան ներքին իրավական ակտերով։

8. Եզրափակիչ դրույթներ

13. Սույն քաղաքականությունը ենթակա է պարբերական վերանայման և արդիականացման՝ հաշվի առնելով Մասնաճյուղի զարգացման ռազմավարությունը, արտաքին փոփոխությունները և շրջանավարտների հետ համագործակցության արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապը։